

«Մաթեմատիկական մեթոդներ և մոդելներ տնտեսագիտության մեջ» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Մաթեմատիկական մեթոդներ և մոդելներ տնտեսագիտության մեջ» մասնագիտացմամբ կրթական ծրագրի նպատակն է խորացնել տնտեսամաթեմատիկական մտածելակերպը, որը հանրավորություն է տալիս հստակ ձևակերպելու նպատակը, նրա օպտիմալացման հնարավորությունները, գնահատելու պատճառահետևանքային կապերը, ներկայացնելու տնտեսական գործոնների փոխկապվածությունները, ձևակերպելու և վերլուծելու ռիսկերը և գնահատելու անորոշության աստիճանը: Տվյալ մագիստրոսական ծրագրի շրջանավարտները դառնալու են կիրառական տնտեսամաթեմատիկական մասնագիտական կարողություններով օժտված մրցունակ մասնագետներ, որոնք ի վիճակի կլինեն հատկապես ներկա անորոշության բարձր աստիճան ունեցող պայմաններում գնահատել մրցունակության պայմանները, կանխատեսել տնտեսության զարգացման հնարավորությունները, տնտեսամաթեմատիկական մոդելավորման միջոցով լուծել տնտեսության առաջ կանգնած բարդ խնդիրները:

Մասնագիտության նկարագիր

Մագիստրոսական ծրագրի նպատակն է ձևավորվորել տնտեսական ցուցանիշների վերլուծության կիրառական մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել տնտեսությունում կանխատեսման և մոդելավորման մեթոդների արդյունավետությունը, համակարգել տնտեսության զարգացման համար անհրաժեշտ նպատակային, նորմատիվային և կարգավորող ցուցանիշները, գնահատել կանխատեսումների և ընդունվող որոշումների արդյունավետությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ծրագրում ներկայացվելու են համախառն ներքին արդյունքի աճի, արտահանման և ներմուծման հնարավոր փոփոխության, ինչպես նաև ներդրումների ու զբաղվածության գնահատականները: Գնահատվելու են գնաձի, պետական բյուջեի պակասուրդի, փողայնացման մակարդակի, արտարժույթային պահուստների բարենպաստ արժեքները, ինչպես նաև անվանական և իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը, պահուստավորման նորման, ազգային արժույթի փոխարժեքը, հարկերը և այլ տնտեսական ցուցանիշներ:

Ներկայացվելու են տվյալների շարքերի, այնպես էլ տվյալների բազաների հետ աշխատանքի և վերլուծության գիտելիքներ, տվյալների տեսակները և դրանց հետ

աշխատանքի առանձնահատկությունները, տվյալների շարքերի բնութագրերը: Չարգացվելու են տվյալների շարքերի և տվյալների բազաների հետ աշխատանքի գործնական հմտություններ:

Առանցքային դեր է խաղալու գործնական գիտելիքների ձևավորումը տնտեսության հիմնախնդիրները բացահայտելու և դրանց լուծման հնարավորությունները ձևավորելու և արդյունավետությունը գնահատելու համար:

Ծրագիրը մասնավորապես ներառում է հետևյալ դասընթացները.

- Տնտեսամաթեմատիկական հետազոտության մեթոդաբանություն,
- Խաղերի տեսության կիրառման հնարավորություններ,
- Ֆինանսական շուկայի մաթեմատիկական մոդելներ,
- Պորտֆելի օպտիմալ կառավարման հիմնախնդիրներ,
- Մրցակցության տնտեսամաթեմատիկական մոդելները և դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում,
- Տնտեսության իմիտացիոն մոդելավորում,
- Տնտեսական ցուցանիշների համակարգում,
- Տնտեսության անորոշության միջակայքեր:

Տվյալ մագիստրոսական ծրագիրը շրջանավարտներին հնարավորություն կտա համակարգված ձևով իրականացնել կանխատեսումներ, կատարել անալիտիկ-վերլուծական աշխատանք, գնահատել տնտեսության անորոշության աստիճանը և ռիսկերը ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակներում:

Աշխատանքի հնարավորություններ

Ժամանակակից աշխարհում տնտեսական վերլուծություն և գնահատում արդյունավետ է կատարվում հիմնականում թվային տեղեկատվության հիման վրա: Այս ծրագիրը հնարավորություն կընձեռնի ներկայացնել փոխկապվածությունները ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակում, վերլուծել և կանխատեսել այն: Մեծ պահանջարկ են վայելում այնպիսի մասնագետները որոնք ոչ միայն ունեն զուտ մասնագիտական գիտելիքներ, այլ նաև տիրապետում են համապատասխան վերլուծական և տնտեսամաթեմատիկական գործիքներին: Տվյալ մասնագիտական գիտելիքները հնարավորություն են ընձեռում մոդելավորել և կանխատեսել գործընթացները տնտեսության տարբեր ոլորտներում:

Մեր շրջանավարտները աշխատում են բանկային ոլորտում, կառավարությունում, զբաղեցնում են բարձր պաշտոններ տարբեր ոլորտներում: Տվյալ մասնագիտությամբ շրջանավարտներից երեքը եղել են ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարար: ՀՀ վերահսկիչ պալատի առաջին նախագահը նույնպես տվյալ մասնագիտության շրջանավարտ է:

Դասապրոցեսը նախատեսվում է իրականացնել է 2 տարի, շաբաթական երեք անգամ: Ուսման վարձը կազմում է 520.000 դրամ տարեկան: